ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- դեկտեմբերի 2020 թվականի №Ա
քաղ. Երևան

ԱՇԽԵՆ ԷԴԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2020 թվականի հոկտեմբերի 6-ի №04/11.1/5526-2020 գրությամբ ներկայացված տեղեկությունն առ այն, որ հետազոտումների արդյունքում 860-920ՄՀց հաճախականային շերտով արձանագրվել են կողմնակի ազդանշաններ, որոնց ճառագայթման աղբյուրը գտնվում է սեփականության իրավունքով Աշխեն Էդիկի Վարդանյանին պատկանող Երևան քաղաքի Կոմիտասի պողոտայի 19 շենքի 52 բնակարանում,

բ) 860-920ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը դադարեցնելու վերաբերյալ Աշխեն Էդիկի Վարդանյանին ուղղված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 7-ի №ՍՇ/34.2-Մ2-9/4240-2020 գրությունը,

գ) որ իրավասու պետական մարմնի կողմից ներկայացված տեղեկատվությամբ փաստվել է Աշխեն Էդիկի Վարդանյանի կողմից առանց թույլտվության 860-920ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի օգտագործումը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ժդ» ենթակետը, 3-րդ կետի «ե» ենթակետը և 60-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Աշխեն Էդիկի Վարդանյանին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից դադարեցնել առանց թույլտվության 860-920ՄՀց ռադիոհաճախականությունների

տիրույթի օգտագործումը և այդ մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին:

2. Ընդունել ի գիտություն, որ Աշխեն Էդիկի Վարդանյանն իրավասու է.

1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ վերանայելու այն.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աշխեն Էդիկի Վարդանյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ---------2020թ.